

Մարզպետ Կարեն Բոթոյանն այցելեց Վարդենիկ համայնք

22.06.2017

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը Վարդենիկ գյուղ կատարած աշխատանքային այցի ընթացքում ծանոթացավ Մարերի բարիք՝ նորաստեղծ սոցիալական ձեռնարկության աշխատանքներին: Ձեռնարկությունը հիմնականում զբաղվում է վայրի բանաջարաբույսերի հավաքմամբ, վերամշակմամբ եւ իրացմամբ:

Ձեռնարկության համահիմնադիր Արտուշ Խաչատրյանը մարզպետ Կարեն Բոթոյանին ներկայացրեց ձեռնարկության գործունեության պատմությունը, նշելով, որ Եվրոպական Միության կողմից իրականացվող Համայնքային զարգացումը սոցիալական ձեռներեցության միջոցով ծրագիրն արդեն իսկ համայնքում խթանել է զբաղվածությունը՝ աշխատանքներում ներգրավելով նաեւ շրջակա համայնքների բնակիչներին: Տարբեր համայնքներից տասնյակ քաղաքացիներ հավաքում եւ համապատասխան գումարի դիմաց մեզ են հանձնում տարածաշրջանում աճող վայրի բանջարեղեն եւ ուտելի խոտաբույսեր՝ շուշան, ուրց, ավելուկ, դադձ: Մեր համայնքում այս գործով զբաղվում են մինչեւ 60-65 ընտանիք: Ստեղծել ենք նաեւ սառնարանային տնտեսություն, ուր պահպանում ենք հավաքած բերքը՝ ժամանակին այն իրացնելու նպատակով: Նաեւ իրացման աղբյուրներ ենք որոնում՝ պատվերներ ընդունելով մարզի եւ մայրաքաղաքի խանութներից, առևտրային խոշոր կետերից: Ստածում ենք նաեւ արտահանման ծավալներ եւ հնարավորություններ ապահովելու մասին, քանի որ օտար երկրներ բնակչության տեղափոխված մեր հայրենակիցները շատ-շատ են կարոտում իրենց ծննդավայրում աճող վայրի բանջարեղենին, թեյատու բույսերին: Մեր նպատակները շատ են, ծրագրերը՝ բազմազան: Առաջին քայլերը հուսադրող են, որոնք մեզ ընդարձակվելու հնարավորություն են տալիս,- ներկայացրեց ձեռնարկատեր Արտուշ Խաչատրյանը:

Մարզպետ Կարեն Բոթոյանը հետաքրքրվեց սույն ծրագրի ընդլայնման հնարավորություններով եւ պատրաստակամություն հայտնեց՝ հնարավորության սահմաններում աջակցություն ցուցաբերել ձեռնարկության հետագա ծավալմանը եւ զարգացմանը: Օրեր առաջ մենք մարզպետարանում հասարակական կազմակերպությունների հետ հրավիրված հանդիպման ընթացքում տեղեկացանք, որ Վարդենիկ համայնքում նման ձեռնարկություն է բացվել եւ անմիջապես որոշեցինք տեղում ծանոթանալ ընդհանուր վիճակին: Ոչ միայն կփորձենք հնարավորինս աջակցել ձեռնարկության ընդլայնմանն ու զարգացմանը, այլ այն օրինակելի դարձնել նաեւ մարզի մյուս տարածքների համայնքների համար,- նշեց Կարեն Բոթոյանը: Աշխատանքային այցի ավարտին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը խորհրդակցություն անցկացրեց Վարդենիկի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքի ակտիվի հետ՝ քննարկելով համայնքի սոցիալ-տնտեսական եւ կրթամշակութային ուղղվածության մի շարք հարցեր: